

Բ Ա Ն Ա Վ Ե Ճ. Д И С К У С С И И

ԿԵՆԴԱՆԱԿԵՐՊԻ ՀԱՅՏՆԱԳՈՐԾՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԻ
ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

Պրոֆ. Գ. Բ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Աստղագիտության պատմության մեջ կենդանակերպի համաստեղությունների անվանումներն ու դրանց նշանները ներկայացվում են հետևյալ տեսքով¹.

ԿԵՆԴԱՆԱԿԵՐՊԻ ՆՇԱՆՆԵՐԸ

Դ	Կուլ	≡	Կրեոխ
Յ	Տուլ	Մ	Հարիս
Ի	Երկվորյակներ	♂	Մեդուսա
Ս	Խնձորներ	♂	Այնթաղ
Ն	Առյուծ	♂	Զեփ
Պ	Կույս	✕	Տիգր

Կենդանակերպի հայտնադործման ժամանակի, համաստեղությունների համար կիրառված նշանների մասին անվանի գիտնական Օ. Նեյգերաուերը գրում է. «Մաթեմատիկական աստղագիտությունը բարձր մակարդակի է հասել ամենաուշը մոտավորապես մինչև մ. թ. ա. 300 թ.: Հավելումների 19-րդ դարի առաջին կեսին, ամենազգալի քայլն էր, որ նախորդեց հետագա աստղագիտական մեթոդներին, այսինքն այն մեթոդներին, որոնք զարգացել էին մոտավորապես մ. թ. ա. 450 թ. հետո: Գրեթե նույն ժամանակաշրջանին, թերևս չորրորդ հարյուրամյակին է պատկանում նաև կենդանակերպի գյուտը: Համաստեղությունները, որոնց անվանումները տրվել են կենդանակերպի նշաններին, իհարկե, ավելի հին են²: Մի այլ տեղ նա դրոշմում է. «Կենդանակերպի և մոլորակների նշանների պատմությունը փաստորեն չկա: Որքան ինձ հայտնի է, ձեռագրերի կամ արձանագրությունների հիման վրա ոչ մի հետազոտություն չի կատարվել: Հունական պապիրուսներում բոլորովին նշաններ չկան»³:

Ինչպես երևում է, Օ. Նեյգերաուերը կենդանակերպի հայտնադործման ժամանակը համարում է մոտավորապես մ. թ. ա. IV դարը: Միջերրումից միաժամանակ հետևում է, որ կենդանակերպի համաստեղությունների նշանները նույնպես ստեղծվել են մ. թ. ա. IV դարում, քանի որ համաստեղություններին տրված անունները ավելի հին են, քան կենդանակերպի նշանները:

¹ Օ. Нейгебауер. Точные науки в древности. М., 1966. с. 216.

² Նույն տեղում, էջ 111:

³ Նույն տեղում, էջ 79:

Ի տարբերություն Օ. Նեյգեբաուերի, այլ տեսակետ է պաշտպանում Ու. Օլկոտը: Նա գրում է. «Աստղաբաշխության տվյալները համապատասխանում են պատմական ու հնագիտական ուսումնասիրություններին այն բանում, որ համաստեղությունների հնագույն ձևերը հորինած մարդիկ, հավանաբար, ապրել են Սփրատր հովտում, ինչպես նաև Արարատ լեռան մոտակա շրջաններում»⁴:

«Շատ գիտնականներ համամիտ են այն կարծիքին, որ կենդանաշրջանի նախագիծը առաջարկվել է այն ժամանակ, երբ գարնանային գիշերահավասարի կետը գտնվում էր Յուլի համաստեղությունում: Այս ենթադրության կապակցությամբ կարող ենք ասել, որ եթե այդ իրոք այդպես է եղել, ապա Արեգակը ծագել է բոլոր այն համաստեղություններում, որոնց պատկերները շրջված են դեպի արևելք, և մայր է մտել այն համաստեղություններում, որոնց պատկերները շրջված են դեպի արևմուտք: Դա այնքան կարևոր և տրամաբանորեն կառուցված սխեմա է, որ հազիվ թե պատահական բնույթ կրի: Կենդանաշրջանի նշանների սկզբնավորումը վերագրվում է 3000 թվականին մինչև Ք. Մ.»⁵:

Ինչպես տեսնում ենք, կենդանակերպի հայտնագործման ժամանակը երկու գիտնականներից մեկը նշում է մեր թվականությունից առաջ մոտավորապես 400 թ., մյուսը՝ մեր թվականությունից առաջ 3000 թ.: Հասկանալի է, սակայն, որ այդ թվականներից միայն մեկը կարող է ճիշտ լինել: Որպեսզի կարողանանք պատասխանել տվյալ հարցին, անհրաժեշտ է դիմել նոր աղբյուրներին:

Այս տեսակետից զգալի հետաքրքրություն են ներկայացնում նախնադարում Հայկական լեռնաշխարհում բնակվող ցեղական խմբավորումների ու պետական կազմավորումների ունեցած աստղագիտական ու տոմարական գիտելիքները:

Երևանից 30 կմ հեռու է գտնվում ամենահին բնակավայրերից մեկը՝ Մեծամորը: Այժմ արդեն լայնորեն հայտնի է, որ Մեծամորը հազարամյակներ առաջ եղել է լեռնամետալուրգիական կենտրոն:

Աստղագետ է. Ս. Պարսամյանը, ուսումնասիրելով Մեծամորի փոքր բլրաշարքը, գրում է. «Այսպիսով, Մեծամորի փոքր բլրաշարքի առաջին իսկ հետազոտությունները ապացուցեցին, որ պաշտամունքային նշանակությունը զուգընթաց այն ունի նաև աստղագիտական նշանակություն՝ կապված երկնային լուսատուների պարզունակ դիտումների հետ:

Բլուրի հարթակների թվագրումը՝ արված սեղանի կողմնորոշումով ըստ Միրիուսի, հանգեցնում է մ. թ. ա. 2800—2600 թթ.: Հնագիտության տվյալներով Մեծամորը բնակելի է եղել մ. թ. ա. III հազարամյակի սկզբից: Մեծամորի փոքր բլրաշարքն ապացուցում է, որ Հայկական լեռնաշխարհի բնակիչները դեռևս խոր անցալում ծանոթ են եղել աստղագիտությանը, որն իր հերթին Արարատյան դաշտավայրի բնակիչների բարձր կուլտուրայի ապացույցն է»⁶:

Աստղագիտության պատմության գիտակ Բ. Ն. Թումանյանը, ծանոթանալով Հայաստանի պատմության թանգարանի հնագիտական ժողովածուներին, գրում է. «Աստղագիտական տեսանկյունից մեծ արժեք է ներկայացնում արեգակնային համակարգության մոդելը պատկերող բրոնզե թիթեղից պատրաստված իրը, որը գտնվել է Սևանի ավազանում: Այն պատկանում է X—XI դարերին (ն. մ. թ.): Նրա ստորին մասում համեմատաբար մեծ չափերով պատկերված է սնամեջ երկիրը՝ շրջապատված ջրային ու մթնոլորտային շերտերով, իսկ դրանից վերև պատրաստված են յոթ լուսատուները: Ընդ որում

⁴ У. Т. Олькотт. Легенды звездного мира. Пг., 1914, с. 8.

⁵ Նույն տեղում, էջ 9:

⁶ Է. Ս. Պարսամյան. Փոքր բլուրի հարթակների աստղագիտական նշանակությունը.—Մեծամոր. Երևան, 1973, էջ 149:

6. Ամիսը բաժանված էր շարաթների, որոնք հավանաբար կրում էին Արեգակի, Լուսնի և անգնի աչքով նկատվող 5 մոլորակների անունները⁸։

Բավական հարուստ նյութ են պարունակում Սովետական Հայաստանում հայտնաբերված ու հրատարակված ժայռապատկերները։ Մեզ հետաքրքրող հարցի առնչությամբ մենք այստեղ կանգ կառնենք միայն այն ժայռապատկերների վրա, որոնք առնչվում են համաստեղությունների գաղափարագիր-նշանների հետ։ Այս տեսակետից արժեքավոր անդեկոթյուններ է պարունակում անվանի հնագետ Հարություն Մարտիրոսյանի «Գիտությունն սկսվում է նախնազարում» աշխատությունը։ Մինչև հիմա հայտնի դարձած ժայռապատկերները հնարավորություն են տվել Հ. Մարտիրոսյանին խոսելու մեզ հայտնի 12 համաստեղությունից 8-ի (Խոյ, Ցուլ, Աղեղնավոր, Երկվորյակ, Խեցգետին, Առյուծ, Կույս և Զրհոս) մասին։

Որոշ համաստեղություններ պատկերված են ամբողջական ձևով և ունեն գաղափարագրեր։ Հոգնածում դետեղում ենք երկու համաստեղությունների՝ Խոյի և Աղեղնավորի գաղափարագրերի աղյուսակները⁹ (նկ. 1, 2)։

Այս աղյուսակները պարզ կերպով ցույց են տալիս, որ նշված համաստեղությունների գաղափարագրերը, հաղարամյակների ընթացքում ենթարկվելով փոփոխության, սաացել են այն տեսքը, որը ընդունված է գիտության պատմության մեջ։

Մեր տրամադրության տակ եղած փաստերը, այսպիսով, հնարավորություն են տալիս պնդելու, որ կենդանակերպի համաստեղությունները իրենց նշաններով հայտնագործվել են ոչ թե մ. թ. ա. IV դարում, ինչպես նշում է Օ. Նեյգեբաուերը, այլ առնվազն երեք հազար տարի մեր թվականությունից առաջ, ինչպես նշում է Վ. Օլկոտը։

Նշված փաստերը մի կողմից ապացուցում են, որ նախնազարում Հայկական լեռնաշխարհում աստղագիտությունը և տոմարագիտությունը գտնվելիս են եղել բարձր մակարդակի վրա, մյուս կողմից, որ Մեծամորում գոյություն է ունեցել աստղադիտարան, որտեղից դիտվել է ոչ միայն Սիրիուսը, ինչպես ենթադրվել է մինչև այժմ. այլև գիտվել են նաև մոլորակները և համաստեղությունները։

Հայկական լեռնաշխարհի տարածքում նոր ժայռապատկերների հայտնաբերումը ու դրանց հանգամանալից ուսումնասիրությունը հնարավորություն կա որոշել բոլոր համաստեղությունների գաղափարագրերը պատմական աարբեր շրջաններում։

О ВРЕМЕНИ ОТКРЫТИЯ ЗОДИАКА И СВЯЗАННЫХ С НИМ ВОПРОСАХ

Проф. Г. Б. ПЕТРОСЯН

Резюме

Обнаруженные на Армянском нагорье наскальные рисунки, а также археологические находки показывают, что там задолго до нашей эры астрономия и летоисчисление находились на высоком уровне развития. Наскальные рисунки содержат богатый материал об идеографических знаках созвездий зодиака, свидетельствующий о том, что зодиак был изобретен не в 400 г. до н. э., как отмечается О. Нейгебауером, а в 3000 г. до н. э., о чем упоминается у У. Олькотта.

⁸ Նույն տեղում, էջ 41։

⁹ Հ. Մարտիրոսյան, Գիտությունն սկսվում է նախնազարում. Երևան, 1973, էջ 149, 163։